

ՊԱՐՍԿԵՐԵՆԻ, ՏԱԶԻԿԵՐԵՆԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԴԱՐԻԻ
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ինչպես հայտնի է, պարսկերենը, *դարիի* (ժամանակակից Աֆղանստանի պետական երկու լեզուներից մեկը) և տաջիկերենի հետ միասին դասվում է հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական ճյուղի արևմտյան կամ նոր իրանական լեզուների հարավ-արևմտյան լեզուների խմբի մեջ¹: Մեր օրերում այդ լեզուներով խոսում են Իրանում, Աֆղանստանում, Տաջիկստանում, Պակիստանում, Ուզբեկստանում և Չնդկաստանում: Այդ լեզուները տարբեր մակարդակներում դրսևորում են զգալի նմանություններ, քերականական և բառապաշարային ընդհանրություններ, որոնք պայմանավորված են նրանց մեկ՝ մայր արմատին պատկանելությամբ՝ լեզվական կոլեկտիվի միևնույն պետության կազմում երկարատև համատեղ կյանքի առկայության պայմաններում:

Երկարատև զարգացման պատմություն ունեցող պարսկերենը, *դարին* և տաջիկերենը, որոնք այսօր առանձին, ինքնուրույն պետությունների ազգային լեզուներ են, ժամանակի ընթացքում զգալի ինքնուրույն առաջընթաց են ունեցել, այդ թվում մեծ փոփոխության են ենթարկվել ինչպես հնչյունական համակարգում, այնպես էլ քերականական կառուցվածքում և բառապաշարում՝ նոր քերականական ձևերի ու բառային խմբերի գոյացման, նրանցում մինչև այդ գոյություն չունեցող բառակազմի բազմակողմանի համալրման ուղղությամբ:

Նշված երեք ցեղակից լեզուները իրենց ընդհանուր օրինաչափություններով և շատ հաճախ նմանությամբ հանդերձ այսօր խիստ տարբերվում են միմյանցից: Նույնիսկ այլ լեզուներից, մասնավորապես արաբերենից, ընդունած փոխառություններից շատերը այդ լեզուներում գործածվում են տարբեր իմաստներով. երբեմն դրանք կիրառվում են միայն դրանցից մեկում կամ մյուսում:

Ռուս և տաջիկ լեզվաբանները այն կարծիքն են հայտնում, որ այդ լեզուների ընդհանուր և տարբերակիչ յուրահատկությունների ուսումնասիրության արդյունքները հիմք են տալիս ընդունելու, որ *դարին* տաջիկերենին ավելի մոտ է քան պարսկերենին: Մինչդեռ մեր դիտարկումների արդյունքում պարզվում է այդ լեզուների մեկ այլ պատկեր: Մասնավորապես, *դարին* 1) իր հնչյունական համակարգով ավելի մոտ է կանգնած տաջիկերենին, քան պարսկերենին, 2) իր բառային կազմով, ընդհակառակը, ավելի մոտ է պարսկերենին,

քան տաքիկերենին, որի հետևանքով պարսկերենը ավելի հասանելի և հասկանալի է եղել *դարիախոսներին*, 3) *դարի*-տաքիկերեն հնչյունական համակարգերի ընդհանրությունները մի կողմից, մյուս կողմից *դարի*-պարսկերեն ընդհանրությունները բառային կազմում վկայում են այն մասին, որ *դարին* յուրահատուկ միջանկյալ դիրք է զբաղեցնում այդ լեզուների միջև:

Որոշ գիտնականներ պնդում են թե, պարսկերենը, տաքիկերենը և *դարին* միևնույն լեզվի տարբեր բարբառներն են, ոմանք էլ՝ թե դրանք իրանում, Տաքիկստանում և Աֆղանստանում ընդունված կամ գործածվող պարսկերենի տարբերակներ են:

Աֆղանստանցի գիտնական Մ. Ն. Սաիդ Նեզհաթն իր աշխատություններից մեկում նշում է. «Պարսկերենն ունի երեք աշխարհագրական լեզվատեսակներ՝ իրանում՝ պարսկերենը, Աֆղանստանում՝ *դարին* և խորհրդային Տաքիկստանում՝ տաքիկերենը»²: Աֆղանստանցի ճանաչված մեկ այլ գիտնական Ռավան Ֆարիադին գրում է, թե ֆարսին պարսկերենը, *դարին* և տաքիկերենը մեկ լեզվի, այսինքն՝ գրական պարսկերենի երեք տարբերակներն են³:

Խորհրդային ռուս արևելագետ Ն. Կիսելովան այս հարցի վերաբերյալ գրում է. «Պարսկերենը, *դարին* և տաքիկերենը միևնույն լեզվի տարբերակներ կամ տարատեսակներ չեն, այլ ինքնուրույն, անկախ լեզուներ են, և այսօր արդեն դրանցից յուրաքանչյուրն իր բարբառներով համարվում է ազգային լեզու»⁴:

Մի խումբ արևելագետներ էլ այն կարծիքին են, թե իբր ժամանակակից իրանում, Աֆղանստանում և Տաքիկստանում գոյություն ունեն երեք ինքնուրույն գրական լեզուներ, որոնցից յուրաքանչյուրն իր հիմքում պահպանում է ընդհանուր դասական գրական պարսկերենը⁵:

Այս կապակցությամբ ֆրանսիացի լեզվաբան Զ.Լազարը նշում է. «Ժամանակակից իրանում, Աֆղանստանում և Տաքիկստանում ձևավորվում են նոր ազգային լեզուներ, որոնք, չկորցնելով իրենց կապը դասական գրական պարսկերենի հետ, որոշ չափով հեռանում են նրանից և մոտենում այդ երկրներում ձևավորվող և որոշիչ ուժ ներկայացնող խոսակցական լեզուներին»⁶:

Այսպիսի բազմակարծությամբ հանդերձ 20-րդ դարի սկզբներից սկսած արևելագետների կողմից կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք մասնավորապես նշել են պարսկերենի և *դարիի* միջև գոյություն ունեցող տարբերությունների և *դարիի* ու տաքիկերենի մամուրությունների մասին: Խորհրդային Միությունում 1932 թվականին լույս տեսած Ս. Բյակովսկու «Պարսկերեն-ռուսերեն և ռուսերեն-պարսկերեն ռազմական և քաղաքական

տերմինների բառարան»-ում առաջին անգամ ներկայացվել են Աֆղանստանի պարսկերենում օգտագործվող բառահոդվածներ, որոնք հետագայում խորհրդային հետազոտողների աշխատություններում նշվել են *դարիաբանություն* (*դարիզմ*) տերմինով: Վերոհիշյալ բառարանի նախաբանում հեղինակը նշում է. «Դեռևս գոյություն չունի մի ընդհանուր ռազմական լեզու ոչ Պարսկաստանում, ոչ էլ Աֆղանստանում: Հաճախ այդ երկրներում միևնույն բառը կամ արտահայտությունը օգտագործվում են տարբեր ձևերով»⁷: Իսկ 40-ական թվականներին *դարիի* բառային կազմից խորհրդային աֆղանագետ Մարտիրոս Ասլանովի կողմից Աֆղանստանում հավաքած շուրջ երկու հազար բառահոդված ընդգրկվել են 1950 թվականին Մոսկվայում տպագրված Բ.Միլերի «Պարսկերեն-ռուսերեն բառարան»-ում: Այնուհետև, Մ.Ասլանովը Աֆղանստանի ֆարսիի վերաբերյալ իր արժեքավոր հոդվածներից մեկում պնդում է *դարիի* ոչ միայն ինքնուրույն լեզու լինելը, այլև նրան հենց այդպիսին ընդունելը: Նման կարծիք է արտահայտել նաև իրանցի գիտնական Սահմուդ Աֆշարը: Նա աֆղանստանցի մտավորական Ն.Մ.Հերավիի վերոհիշյալ աշխատության նախաբանում նշել է. «Ես, որպես մի իրանցի, պնդում եմ, որ *դարին* դառնա Աֆղանստանի պաշտոնական և ազգային լեզուն»⁸: Այս գաղափարի իրականացման ճանապարհին ձեռնարկած առաջին քայլերից մեկն էլ նշված բառարանի վերահրատարակության ժամանակ նրանում զետեղված, այսպես կոչված, Աֆղանստանի ֆարսիի երկու հազար բառերից ձերբազատվելն էր:

Դարիի, նրա բառային կազմի տարբերակման մասին խորհրդային արևելագիտության դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ՝ Վ.Ջագրեբեկին, նշում է, որ անհրաժեշտ է վերանայել աֆղանստանցի անվանի գիտնական Աբդուլ Ղաֆուր Ֆարիադիի հայտնի այն տեսակետը, ըստ որի իբր «Մերօրյա Քաբուլի և Թեհրանի գրական լեզուները նույն պարսկերենն են և դրանց միջև առաջացել են ընդամենը աննշան տարբերություններ»⁹: Այս կապակցությամբ Վ.Ջագրեբեկին նույն հոդվածում ընդգծել է այդ լեզուների բառային կազմերի միջև գոյություն ունեցող տարբերությունները՝ մեջբերելով Քաբուլում հրատարակվող «Քարավան» օրաթերթի 1971 թվականի հունվարի 14-ի համարում տպագրված հոդվածներից մեկում արժարժված կարծիքը, թե՛ «Մինչև որ պարսկերենի, *դարիի* և տաջիկերենի բառային կազմերը չներկայացվեն մեկ ընդհանուր բառարանում, անհնար է պատկերացնել այդ լեզուներում առկա զգալի տարբերությունները»¹⁰:

Նշված բոլոր փաստերը վկայում են, որ *դարին*, արդեն իրոք լինելով անկախ պետության լեզու, պետք է դիտվեր որպես ինքնուրույն, առանձին լեզու: Եվ ինչպես հայտնի է, Աֆղանստանի 1964թ. Սահմանադրության մեջ

արդեն ֆարսիի փոխարեն շրջանառության մեջ է դրվել *դարի* բառը¹¹: Այս առիթով մեքենանք Լ. Կիսեյովայի հետևյալ տողերը. «8-9-րդ դարերում խորասանում և Մավերալմահրում լայն տարածում գտած պարսկա-տաջիկական գրական լեզվի անվան վերածնունդը Աֆղանստանում ուներ նաև քաղաքական նշանակություն: Այստեղ ֆարսին *դարիի* վերանվանելով՝ ցուցաբերվել է ազգային մոտեցում: Աֆղանստանցի լեզվաբան Մոհամմադ Նասիմ Նեզհաթ Սաիդին Քարուլի համալսարանի գրականության և հումանիտար գիտությունների ֆակուլտետի օրգան «Ադաք» ամսագրում հրատարակեց մի շարք հոդվածներ՝ նվիրված *ժամանակակից դարիի* քերականության զանազան խնդիրներին (ծնաբանություն և շարահյուսություն): Այս գիտնականի ջանքերով են կատարվել առաջին քայլերը *դարիի* ուղղագրության կայունացման բնագավառում: Նա իր հոդվածներում նշել է նաև *դարիի* և Քարուլի խոսակցական լեզուների միջև գոյություն ունեցող սերտ կապերի մասին»¹²:

20-րդ դարի 60-80-ական թվականներին խորհրդային արևելագետների դպրոցի ներկայացուցիչներ Լ.Դորոֆեևան, Տ.Պախալիման, Լ.Կիսեյովան, Վ. Միկոլայչիկը, Բ. Օստրովսկին, Վ.Զագրեբելնին, Յու. Իոաննեսյանը և ուրիշներ այս լեզվի վերաբերյալ կատարել են մի շարք արժեքավոր գիտահետազոտական աշխատանքներ և հրատարակել են քերականական ձեռնարկներ, դասագրքեր, բառարաններ: Ռուսերենից *դարի* են թարգմանվել բազմաթիվ աշխատություններ, գրական ստեղծագործություններ և այլն:

Արդյունքում, անցած հարյուրամյակի 90-ական թվականներին աշխարհի լեզուների ծագումնաբանական դասակարգմամբ այդ լեզուն պաշտոնապես ճանաչվել է որպես ինքնուրույն լեզու և դասվել հնդեվրոպական ընտանիքի հնդիրանական ճյուղի՝ արևմտյան իրանական լեզուների թվին:

Սենք, *դարին*, պարսկերենը և տաջիկերենը ընդունելով որպես առանձին, ինքնուրույն ազգային-պաշտոնական լեզուներ, իրականացրել ենք պարսկերենի և *դարիի* բառային կազմերի համեմատական-համադրական քննություն, որի շրջանակներում մեր նպատակն է եղել ներկայացնել այսօրվա *դարիի* և պարսկերենի միջև առկա տարբերությունները: Այդ իսկ խնդրից ելնելով վերջերս Երևանում լույս տեսան մեր հեղինակած «Պարսկերեն-դարի-հայերեն, դարի-պարսկերեն-հայերեն» և «Պարսկերեն-դարի-ռուսերեն, դարի-պարսկերեն-ռուսերեն» բառարանները, որոնցում արտացոլված են պարսկերենի և *ժամանակակից դարիի* բառապաշարներում առկա ինչպես հնչյունական, այնպես էլ բառակազմական և ուղղագրական մի շարք տարբերություններ:

(Հղումներով, պարսկերեն – դարի լեզուներով գրականությունը փոփոխվում է անգլերեն գրությամբ)

- 1 Гамкхелидзе Т.В., Иванов В.В., *Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т.1, Тбилиси, 1984, с. xlvі–lvі., *Основы иранского языкознания. Новоиранские языки*, Москва, 1982, с. 5–19., *Языки и диалекты мира*, Москва, 1982, с. 18.
- 2 Neghat Saidi M.N., *Dasture zabane moasere dari*, Kabol, 1969, s. 3.
- 3 Фархади Р., *Разговорный фарси в Афганистане*, Москва, 1974, с. 5.
- 4 Киселова Л. Н., *Очерки по лексикологии языка дари*, Москва, 1973, с. 9–10.
- 5 Киселова Л. Н., *Язык дари Афганистана*, Москва, 1985, с.38.
- 6 Lazard G., *Caracteres distinctif de la langue Tadjiki*, Paris, 1956, p. 117–118.
- 7 Бялковский С., *Персидско-русский и русско-персидский словарь военных и политических терминов*, Москва – Ташкент, 1932, с. 3.
- 8 Heravi N. M., *Tarikh va zaban dar Afghanistan*, Tehran, 1992, s.10.
- 9 Загребельный В. Н., *Некоторые социологические аспекты проникновения англицизмов в дари*, в кн. *Лексикология и грамматика восточных языков*, Москва, 1975, с.10.
- 10 Там же, с.10–11.
- 11 Конституция Афганистана, 9 мизана 1343 г.(01.10.1964г.), глава I, статья 3, Кабул (перевод на русский язык), см. Ахрамович Р.Т., *Афганистан в 1961–1966 гг.*, Москва, с. 146.
- 12 Киселева Л.Н., *Очерки по лексикологии языка дари*, с. 4–9.